ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ
ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտի 1, հեռ. +(374 11) 514-240

№ Հ/ 154 24.05.2019թ.

*Ինֆորմացիայի ազատության*
*Կենտրոն ՀԿ նախագահ*
*Շուշան Դոյդոյանին*

*Հարգելի տիկին Դոյդոյան,*

Ի պատասխան Երևանի քաղաքապետին հասցեագրված Ձեր գրության՝ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Արզումանյան հ.4 և Հալաբյան հ.13 շենքերի բնակիչների ահազանգի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ ՀՀ կառավարության «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» 18.05.2006թ. հ.912-Ն որոշման շրջանակներում, կայացվել է Երևանի քաղաքապետի 20.12.2007թ. հ.5739-Ա և 01.12.2008թ. հ.5614-Ա որոշումները, ըստ որոնց Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող, ք.Երևան, Արզումանյան փողոց հ.4/5 հասցեում գտնվող հասարակական նշանակության ինքնակամ կառույցը համարվել է Երևան քաղաքի սեփականություն, օրինականացված կառույցը և հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքի ձևով վաճառվել է կառուցապատող հանդես եկող Վարդան Առաքելյանին: Գույքի նկատմամբ վերջինիս իրավունքները ստացել են պետական գրանցում:

Ներկայումս իրականացվող շինարարական աշխատանքների համար առկա է գոյություն ունեցող շինության քանդման և հասարակական նշանակության օբյեկտի կառուցման նպատակով Երևանի քաղաքապետարանի կողմից 28.10.2011թ. համաձայնեցված հ.01/18-05/1-Ա-5192-898 աշխատանքային նախագիծը և կառուցապատող Վարդան Առաքելյանին 28.10.2011թ. տրված հ.01/18-Ա-5307-906 շինարարության թույլտվությունը /15.05.2018թ. երկարաձգվել է՝ հ.18-08/1-Ա-3109/:

Աշխատանքային նախագիծը համաձայնեցվել է հիմք ընդունելով «ԼԱՎՈ» ՍՊ ընկերության կողմից տրված հ.163-10 դրական փորձագիտական եզրակացությունը, որի շրջանակներում փորձաքննություն անցկացնող լիցենզավորված կազմակեր-պությունը դիտարկել է նախագծի համապատասխանությունը ՀՀ-ում գործող նորմատիվա-տեխնիկական պայմաններին և երաշխավորել համաձայնեցման:

Հարակից շենքերի բնակիչների մասնակցությամբ քննարկում լինելու վերաբերյալ տրամադրված քաղաքաշինական փաստաթղթերում որևէ տեղեկատվություն առկա չէ, սակայն հարկ ենք համարում նշել, որ նման օբյեկտների կառուցման համար քաղաքաշինական փաստաթղթերի տրամադրման ընթացակարգում իրազեկում չի նախատեսվում:

Սույն թվականի մայիսի 11-ին նշված հասցեում կառուցապատողի կողմից սկսված շինարարական աշխատանքները ժամանակավորապես կասեցվել են՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշման Հավելված N 1-ով հաստատված կարգի VI բաժնի 129-րդ կետը՝ շինարարական աշխատանքների սկսման վերաբերյալ ծանուցում (Ձև N2-5) Երևանի քաղաքապետարան չներկայացնելու հիմքով:

Տեղեկացնում ենք, որ հաշվի առնելով նաև Երևանի քաղաքապետարանի թեժ գծի հեռախոսահամարով ստացված ահազանգերը և հարակից շենքերի բնակիչների դժգոհությունը, վերը նշված քաղաքաշինական փաստաթղթերի օրինաչափության և բարձրացված հարցերի պարզաբանման նպատակով նախապատրաստվում է վարչական վարույթի իրականացում: